ՀՀ ԳԱԱ նախագահը շնորհավորել է ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Դենհամի պրոֆեսոր, լորդ Արա Դարզիին Բրիտանական գիտության ասոցիացիայի (BSA) նախագահությունը ստանձնելու կապակցությամբ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը շնորհավորական նամակ է հղել ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ, Դենհամի պրոֆեսոր, լորդ Արա Դարզիին Բրիտանական գիտության ասոցիացիայի (BSA) նախագահությունը 2020 թ. սեպտեմբերի 1-ից մեկ տարով ստանձնելու կապակցությամբ:

«Հարգելի պրոֆեսոր Արա Դարզի, մեծ ուրախությամբ տեղեկացանք Ձեր՝ Բրիտանական գիտության ասոցիացիայի նախագահի պաշտոնում նշանակվելու մասին: Ընդունե՛ք մեր ջերմ շնորհավորանքներն այդ առթիվ: Հուսով ենք, որ Ձեր նշանակումը կամրապնդի մեր կապերը և մեր գիտական համագործակցությունը կբարձրացնի նոր մակարդակի: Մաղթում ենք Ձեզ հաջողություններ այսօր և միշտ»:

Ի արձագանք ՀՀ ԳԱԱ նախագահի շնորհավորանքի՝ պրոֆեսոր Արա Դարզին պատասխան նամակում գրել է.

«Հարգելի՛ պրոֆեսոր Մարտիրոսյան,

Ես շատ ուրախ եմ եկող տարի ստանձնելու Բրիտանական գիտության ասոցիացիայի նախագահությունը և համակարծիք եմ Ձեզ հետ, որ այս նշանակումը կօգնի հետագայում ամրապնդելու մեր հարաբերությունները»:

Արա Վարդգես Դարզին ծնվել է 1960թ. Իրաքի Բաղդադ քաղաքում՝ 1915 թվականի Հայոց ցեղասպանությունից փրկված հայ ծնողների ընտանիքում: Նա աշխարհի առաջատար վիրաբույժներից է: Լոնդոնի Կայսերական քոլեջի նրա ղեկավարած ամբիոնը զբաղվում է ռոբոտացված վիրաբուժությամբ: Պրոֆեսոր Դարզին Լոնդոնի Կայսերական քոլեջի Գլոբալ առողջության նորարարության ինստիտուտի տնօրենն է, քոլեջի Փոլ Համլինի վիրաբուժության ամբիոնի և Քաղցկեղի հետազոտության ինստիտուտի ղեկավարը: Արա Դարզին նաև խորհրդատու վիրաբույժ է Imperial College հոսպիտալում, Royal Marsden-ում: Պրոֆեսոր Դարզին վիրաբուժության մեջ ռոբոտների և տեխնոլոգիաների կիրառման հեղինակ է: